243
U-83

2475

1912

2010

2001

# ՀԱՏԸՆՏԻՐ ԱՂՕԹՔՆԵՐ

# ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ

# Ս. ԵԿԵՂԵՑԻՈՅ

## ՀԱՆԴԵՐՁ ՌՈՒՍԵՐԷՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԵԱՄԲ


ԿԱԶՄԵՑ

ՍԻՄԷՕՆ ՍԱՐԿԱՒԱԳ (ԽՈՐԷՆ ՔԱՀԱՆԱՅ)
ՄՆԱՑԱԿԱՆԵԱՆՑ



(Երկրորդ տպագրութիւն)



499/281



Աստրախան

Տպարան «Ապրեսեան և Օկուր» ընկ.

1912.

H АРМ. 2-8952
243 / Մ-89
2998
35274

ՀԱՏԸՆՏԻՐ ԱՂՕԹՔՆԵՐ

# ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑՒՈՅ

ՀԱՆԴԵՐՁ ՌՈՒՍԵՐԷՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԵԱՄԲ

ԿԱԶՄԵՑ
ՍԻՄԷՕՆ ՍԱՐԿԱՒԱԳ (ԽՈՐԷՆ ՔԱՀԱՆԱՅ)
ՄՆԱՑԱԿԱՆԵԱՆՑ

35274

Աստրախան
Տպարան «Ապրեսեան և Օկուր» ընկ.
1912.

Ըստ բարձու հրամանի Նորին Ս. Օծութեան Վեհափառ Հայրապետի ազգիս Տ. Տ. Մկրտչի, Դիւանս թոյլատրէ տպագրութեան ազօթամատենիս չըգտանելով արգել ինչ ընդդէմ դաւանութեան եկեղեցւոյն Հայաստանեայց։

Դիւանապետ՝
Կորիւն Վարդապետ.

Ի 19 Նոյեմբերի,
1901 թ.
ի Տփխիս։

Дозволено цензурою. Спб. 3 Ноября 1901 г.

11578-ա.հ.

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Арм. ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

35274

Типографія „Апресянцъ и Окуръ" въ Астрахани.

# Ի ՅԻՇԱՏԱԿ

## ԱՆՄՈՌԱՆԱԼԻ ԵՂԲՕՐ ԻՄՈՅ

## ՄԿՐՏՉԻ

## ԱՂՕԹՔ ՏԷՐՈՒՆԱԿԱՆ

Հայր մեր, որ յերկինս ես. սուրբ եղիցի անուն քո. եկեսցէ արքայութիւն քո. եղիցին կամք քո որպէս յերկինս և յերկրի. զհաց մեր հանապազորդ տուր մեզ այսօր. և թող մեզ զպարտիս մեր, որպէս և մեք թողումք մերոց պարտապանաց, և մի տանիր զմեզ ի փորձութիւն, այլ փրկեա զմեզ ի չարէ. զի քո է արքայութիւն և զօրութիւն և փառք յաւիտեանս: Ամէն:

---

## ԱՂՕԹՔ ԱՌ ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆՆ

Անկանիմք առաջի քո, սուրբ Աստուածածին, և աղաչեմք զանարատ զկոյսդ. բարեխօսեա վասն անձանց մերոց և աղաչեա զմիածին Որդիդ՝ փրկել զմեզ ի փորձութենէ և յամենայն վտանգից մերոց:

---

## МОЛИТВА ГОСПОДНЯ.

Отче нашъ, сущій на небесахъ! да святится имя Твое; да пріидетъ царствіе Твое; да будетъ воля Твоя и на землѣ, какъ на небѣ; хлѣбъ нашъ насущный дай намъ на сей день; и прости намъ долги наши, какъ и мы прощаемъ должникамъ нашимъ; и не введи насъ въ искушеніе но избавь насъ отъ злого; ибо Твое есть царство и сила и слава во-вѣки. Аминь.

---

## МОЛИТВА КЪ СВЯТОЙ БОГОРОДИЦѢ.

Припадаемъ къ Тебѣ, святая Богородица! молимъ Тебя — непорочную Дѣву, будь заступницей нашей предъ Твоимъ единороднымъ Сыномъ, да избавитъ Онъ насъ отъ искушенія и всѣхъ напастей.

---

## ՍԱՂՄՈՍ ԴԱՒԹԻ

Ողորմեա՛ ինձ, Աստուած, ըստ մեծի ողորմութեան քում. ըստ բազում գթութեան քում քաւեա՛ զանօրէնութիւնս իմ։

Առաւել լուա՛ զիս յանօրէնութենէ իմմէ. և ի մեղաց իմոց սուրբ արա զիս։

Զանօրէնութիւնս իմ ես ինձէն գիտեմ. և մեղք իմ առաջի իմ են յամենայն ժամ։

Քեզ միայն մեղայ, Տէր, և չար առաջի քո արարի։

Որպէս արդար եղիցիս ի բանս քո, և յաղթող ի դատել դաս։

Անօրէնութեամբ յղացայ, և ի մեղս ծնաւ զիս մայր իմ։

Դու, Տէր, զճշմարտութիւն սիրեցեր. զանյայտս և զծածկեալս իմաստութեամբ քով յայտնեցեր ինձ։

Ցօղեա՛ յիս մշտկաւ և սուրբ եղէց. լուա՛ և քան զձիւն սպիտակ եղէց։



## ПСАЛОМЪ ДАВИДА.

Помилуй меня, Боже, по великой милости Твоей и по множеству щедротъ Твоихъ изгладь беззаконія мои.

Многократно омой меня отъ беззаконія моего и отъ грѣха моего очисти меня.

Ибо беззаконія мои я сознаю, и грѣхъ мой всегда предо мною.

Тебѣ, Тебѣ единому согрѣшилъ я, Господи, и лукавое предъ очами Твоими сдѣлалъ.

Такъ--что Ты праведенъ въ приговорѣ Твоемъ и чистъ въ судѣ Твоемъ.

Вотъ, я въ беззаконіи зачатъ, и во грѣхѣ родила меня мать моя.

Вотъ, Ты возлюбилъ истину въ сердцѣ и внутрь меня явилъ мнѣ мудрость Твою.

Окропи меня иссопомъ, и буду чистъ; омой меня, и буду бѣлѣе снѣга.

Լսելի արա ինձ, Տէ՛ր, զցնծութիւն և զուրախութիւն, և ցնծասցեն ոսկերք իմ տառապեալք:

Դարձո՛ զերեսս քո ի մեղաց իմոց. և զամենայն անօրէնութիւնս իմ քաւեա՛ յինէն:

Սիրտ սուրբ հաստատեա՛ յիս, Աստուած, և հոգի ուղիղ նորոգեա՛ ի փորի իմում:

Մի՛ ընկեներ զիս, Տէ՛ր, յերեսաց քոց, և զհոգի քո Սուրբ մի՛ հաներ յինէն:

Տո՛ւր ինձ ցնծութիւն փրկութեան. և հոգւով պետութեան քո հաստատեա զիս:

Ուսուցից անօրինաց զճանապարհս քո. և ամբարիշտք առ՝ քեզ դարձցին:

Փրկեա՛ զիս յարենէ, Աստուած, Աստուած փրկութեան իմոյ. ցնծասցէ լեզու իմ յարդարութեան քում:

Տէ՛ր, եթէ զշրթունս իմ բանաս, բերան իմ երգեսցէ զօրհնութիւնս քո:

Թէ կամեցեալ էիր, պատարագս մա-



Дай мнѣ услышать радость и веселіе, и возрадуются кости, Тобою сокрушенныя.

Отврати лицо Твое отъ грѣховъ моихъ и изглажь всѣ беззаконія мои.

Сердце чистое сотвори во мнѣ, Боже, и духъ правый обнови внутри меня.

Не отвергни меня отъ лица Твоего и Духа Твоего Святого не отними отъ меня.

Возврати мнѣ радость спасенія Твоего и духомъ владычественнымъ утверди меня.

Научу беззаконныхъ путямъ Твоимъ, и нечестивые къ Тебѣ обратятся.

Избавь меня отъ кровей, Боже, Боже спасенія моего, и языкъ мой восхвалитъ правду Твою.

Господи! отверзи уста мои, и уста мои возвѣстятъ хвалу Твою:

Ибо жертвы Ты не желаешь,—я

տուցանէաք. բայց Դու ընդ ողջակէզս իսկ ոչ հաճեցար։

Պատարագ Աստուծոյ՝ հոգի խոնարհ, զսիրտ սուրբ և զհոգի խոնարհ Աստուած ոչ արհամարհէ։

Բարի արա, Տէր, կամօք Քովք Սիօնի. և շինեսցին պարիսպքն Երուսաղէմի։

Յայնժամ հաճեսցիս ընդ պատարագս արդարութեան. յորժամ ուխտից պատարագս հանցեն ի սեղան Քո զուարակս։

---

## ԱՂՕԹՔ ՄԱՆԱՍԷԻ ԹԱԳԱՒՈՐԻ։

Տէր Ամենակալ՝ Աստուած Աբրահամու՝ Իսահակայ՝ Յակոբայ՝ և զաւակի նոցա արդարոց։ Ամենակալ Տէր, թող զմեղս իմ։

Որ արարեր զերկինս և զերկիր՝ և զամենայն զարդ նոցա։ Ամենակալ Տէր, թող զմեղս իմ։



далъ бы ее; къ всесожженію не благоволишь.

Жертва Богу — духъ сокрушенный, сердца сокрушеннаго и смиреннаго Ты не презришь, Боже.

Облагодѣтельствуй, Господи, по благоволѣнію Твоему Сіонъ; воздвигни стѣны Іерусалима:

Тогда благоугодны будутъ Тебѣ жертвы правды, возношеніе и всесожженіе, тогда возложатъ на алтарь Твой тельцовъ:

---

## МОЛИТВА ЦАРЯ МАНАСІИ.

Господь Вседержитель, Боже отцовъ нашихъ Авраама и Исаака и Іакова, и сѣмени ихъ праведнаго. Господь Вседержитель, отпусти грѣхи мои!

Сотворившій небо и землю со всѣмъ благолѣпіемъ ихъ. Господь Вседержитель, отпусти грѣхи мои!

Որ կապեցեր զծով բանիւ հրամանի Քո. փակեցեր զխորս. կնքեցեր ահաւոր և փառաւորեալ անուամբ Քով սրբով։ Ամենակալ Տէր, թո՛ղ զմեղս իմ։

Որ ամենայն ինչ սարսի և դողայ յերեսաց ահի զօրութեան Քո։ Ամենակալ Տէր, թո՛ղ զմեղս իմ։

Անբաւ է մեծ վայելչութիւն փառաց սրբութեան Քո. և սաստիկ է բարկութիւն սպառնալեաց Քոց ի վերայ մեղաւորաց, անչափ և անքննին են ողորմութիւնք աւետեաց Քոց։ Ամենակալ Տէր, թո՛ղ զմեղս իմ։

Դու, Տէր, բարձրեալ, գթած, երկայնամիտ, բազումողորմ. և զղջանաս ի վերայ չարեաց մարդկան։ Ամենակալ Տէր, թո՛ղ զմեղս իմ։

Դու, Աստուա՛ծ, ո՛չ եդեր ապաշխարութիւն վասն արդարոցն Աբրահամու, Իսահակայ և Յակոբայ՝ որք ո՛չ մեղան Քեզ։ Ամենակալ Տէր, Թո՛ղ զմեղս իմ։

Այլ եդեր ապաշխարութիւն վասն իմ



Связавшій море словомъ повелѣнія Твоего, заключившій бездну и запечатавшій ее страшнымъ и славнымъ именемъ Твоимъ. Господь Вседержитель, отпусти грѣхи мои!

Котораго всѣ боятся, и трепещутъ отъ лица силы Твоея. Господь Вседержитель, отпусти грѣхи мои!

Потому что никто не можетъ устоять предъ великолѣпіемъ славы Твоея, и нестерпимъ гнѣвъ прощенія Твоего на грѣшниковъ. Но безмѣрна и неизслѣдима милость обѣтованія Твоего. Господь Вседержитель, отпусти грѣхи мои!

Ибо Ты Господь вышній, благій, долготерпѣливый и многомилостивый и кающійся о злобахъ человѣческихъ. Господь Вседержитель, отпусти грѣхи мои!

Ты, Боже не положилъ покаянія праведнымъ Аврааму и Исааку и Іакову, не согрѣшившимъ Тебѣ. Господь Вседержитель, отпусти грѣхи мои!

Но положилъ покаяніе мнѣ грѣш-

մեղաւորիս. զի մեղայ աւելի քան զաւազ ծովու. և բազմացան անօրէնութիւնք իմ։ Ամենակալ Տէր, թող զմեղս իմ։

Չեմ արժանի հայիլ և տեսանել զբարձրութիւնս երկնից, ի բազմութենէ անօրէնութեան իմոյ։ Ամենակալ Տէր, թող զմեղս իմ

Կորացեալ եմ ես ի բռնութենէ կապանաց երկաթից՝ և ոչ գոյ ինձ հանգիստ։ Ամենակալ Տէր, թող զմեղս իմ։

Բարկացուցի զսրտմտութիւն՝ և զչար առաջի Քո արարի. կանգնեցի պատկեր և բազմացուցի զցասումն անձին իմոյ։ Ամենակալ Տէր, թող զմեղս իմ։

Եւ արդ, Տէր, խոնարհեցուցանեմ զծունր սրտի իմոյ՝ և հայցեմ ի քաղցրութենէ Քումմէ։ Ամենակալ Տէր, թող զմեղս իմ։

Մեղայ, Տէր, մեղայ, և զանօրէնութիւնս իմ ես ինձէն գիտեմ։ Ամենակալ Տէր, թող զմեղս իմ։



нику, потому что я согрѣшилъ паче числа песка морского и многочисленны беззаконія мои. Господь Вседержитель, отпусти грѣхи мои!

Я недостоинъ взирать на высоту небесную отъ множества неправдъ моихъ. Господь Вседержитель, отпусти грѣхи мои!

Я согбенъ многими желѣзными узами и нѣтъ мнѣ отдохновенія. Господь Вседержитель, отпусти грѣхи мои!

Потому что прогнѣвалъ Тебя и сдѣлалъ предъ Тобою злое; поставилъ мерзости и умножилъ соблазны. Господь Вседержитель, отпусти грѣхи мои!

И нынѣ преклоняю колѣна сердца моего, умоляя Тебя и благости. Господь Вседержитель, отпусти грѣхи мои!

Согрѣшилъ я, Господи, согрѣшилъ, и беззаконія мои я знаю. Господь Вседержитель, отпусти грѣхи мои!

Աղաչեմ և խնդրեմ ի Քէն՝ թո՛ղ ինձ, Տէր, թո՛ղ ինձ. և մի՛ կորուսաներ զիս ըստ անօրէնութեան իմոյ։ Ամենակալ Տէ՛ր, թո՛ղ զմեղս իմ։

Մի՛ յաւիտեան բարկանար ինձ, Տէ՛ր, է մի՛ յիշեր զչարիսն իմ, և մի՛ պարտաւորեր զիս ընդ իջեալսն ի ներքոյ երկրի չարեօք։ Ամենակալ Տէ՛ր, թո՛ղ զմեղս իմ։

Զի Դու, Աստուած՝ Աստուած ապաշխարողաց ես. և յիս ցո՛յց զբարերարութիւնդ Քո՝ որ անարժան եմ։ Ամենակալ Տէ՛ր, թո՛ղ զմեղս իմ։

Կեցուսցես զիս ըստ բազում ողորմութեան Քում. և ես օրհնեցից զՔեզ զամենայն աւուրս կենաց իմոց։ Ամենակալ Տէ՛ր, թո՛ղ զմեղս իմ։

ԶՔեզ, Տէ՛ր, օրհնեն ամենայն զուարթունք երկնից. և Քո են փառք յաւիտեանս. ամէն։

---



Но прошу, молясь Тебѣ: отпусти мнѣ, Господи, отпусти мнѣ и не погуби меня съ беззаконіями моими. Господь Вседержитель, отпусти грѣхи мои!

Не прогнѣвайся на меня вѣчно, Господи, и не вспоминай злодѣянія мои, и не осуди меня съ низшедшими подъ землю злыми. Господь Вседержитель, отпусти грѣхи мои!

Ибо Ты Богъ, Богъ кающихся, и на мнѣ, недостойнаго, яви всю благость Твою. Господь Вседержитель, отпусти грѣхи мои!

Спаси меня по великой милости Твоей, и буду прославлять Тебя во всѣ дни жизни моей. Господь Вседержитель, отпусти грѣхи мои!

Потому что Тебя славятъ всѣ силы небесныя, и Твоя слава во вѣки вѣковъ. Аминь.

---

35274
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос Библиотека
ՀՍՍՀ [illegible] ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆ [illegible]

## ԱՂՕԹՔ ՏԵԱՌՆ ՆԵՐՍԻՍԻ ՇՆՈՐՀԱԼԻՈՅ, ՀԱՅՈՑ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ։

1. Հաւատով խոստովանիմ և երկիրպագանեմ Քեզ, Հայր և Որդի, և Սուրբ Հոգի, անեղ և անմահ բնութիւն. Արարիչ հրեշտակաց և մարդկան և ամենայն եղելոց։

Ողորմեա՛ Քո արարածոց։

2. Հաւատով խոստովանիմ և երկիրպագանեմ Քեզ, անբաժանելի Լոյս, միասնական սուրբ Երրորդութիւն և մի Աստուածութիւն, Արարիչ լուսոյ և Հալածիչ խաւարի. հալածեա՛ ի հոգւոյ իմմէ զխաւար մեղաց և անգիտութեան. և լուսաւորեա՛ զմիտս իմ ի ժամուս յայսմիկ՝ աղօթել Քեզ ի հաճոյս, և ընդունել ի Քէզ զխնդրուածս իմ։

Եւ ողորմեա՛ ինձ բազմամեղիս։

3. Հա՛յր երկնաւոր, Աստուած ճշմարիտ, որ առաքեցեր զՈրդիդ Քո սիրելի ի խնդիր մոլորեալ ոչխարին, մե-



## МОЛИТВА НЕРСЕСА БЛАГОДАТНАГО, КАТОЛИКОСА АРМЯНСКАГО.

1. Съ вѣрою исповѣдую и покло-няюсь Тебѣ, Отецъ и Сынъ и Святой Духъ; несозданное и безсмертное естество, Творецъ ангеловъ и человѣковъ и всего существующаго.

Помилуй Твоихъ твореній!

2. Съ вѣрою исповѣдую и поклоняюсь Тебѣ, нераздѣльный Свѣтъ, единосущная святая Троица и единое Божество, Создавшее свѣтъ и Разсѣявшее тьму! Разсѣй въ моей душѣ тьму грѣховъ и невѣдѣнія, и просвѣти мысль мою въ сей самый часъ, дабы молитва моя была Тебѣ благоугодна, и прими мои моленія!

И помилуй меня многогрѣшнаго.

3. Небесный Отецъ, истинный Богъ! Ты послалъ Твоего возлюбленнаго Сына искать заблудившуюся

ղա՛յ յերկինս և առաջի Քո. ընկա՛լ զիս որպէս զանառակ որդին, և զգեցո՛ ինձ զպատմուճանն առաջին՝ զոր մերկացայ մեղօք։ Եւ ողորմեա՛ Քո արարածոց և ինձ բազմամեղիս։

4. Որդի՛ Աստուծոյ, Աստուած ճշմարիտ, որ խոնարհեցար ի Հայրական ծոցոյ, և առեր մարմին ի սրբոյ Կուսէն Մարիամայ վասն մերոյ փրկութեան. խաչեցար և թաղեցար և յարեար ի մեռելոց, և համբարձար փառօք առ Հայր. մեղա՛յ յերկինս և առաջի Քո. յիշեա՛ զիս որպէս զաւազակն՝ յորժամ գաս արքայութեամբ Քով։ Եւ ողորմեա՛ Քո արարածոց և ինձ բազմամեղիս։

5. Հոգի՛ Աստուծոյ, Աստուած ճշմարիտ, որ իջեր ի Յորդանան և ի Վերնատունն, է լուսաւորեցեր զիս մկրտութեամբ սուրբ աւազանին, մեղա՛յ յերկինս և առաջի Քո. մաքրեա՛ զիս վերստին Աստուածային հրով Քով, որպէս հրեղէն լեզուօք զառաքեալսն։ Եւ ողոր-



овцу! Согрѣшилъ я противъ неба и предъ Тобою; прими меня какъ блуднаго сына, и облеки меня въ первоначальную одежду, изъ которой я совлеченъ грѣхомъ. И помилуй Твоихъ твореній и меня многогрѣшнаго!

4. Сынъ Божій истинный Богъ! Ты низшелъ изъ нѣдръ Отца и принялъ плоть отъ святой Дѣвы Маріи ради нашего спасенія; былъ распятъ, погребенъ и всскресъ изъ мертвыхъ, и вознесся въ славѣ къ Отцу! Согрѣшилъ я противъ неба и предъ Тобою; помяни меня какъ нѣкогда разбойника, когда придешь въ царствіе Твое. И помилуй Твоихъ твореній и меня многогрѣшнаго!

5. Духъ Божій, истинный Богъ! Ты низшелъ на Іорданъ и на Горницу и просвѣтилъ меня крещеніемъ святой купели! Согрѣшилъ я противъ неба и предъ Тобою; очисти меня снова Твоимъ Божественнымъ огнемъ, какъ очистилъ апо-

մեա՛ Քո արարածոց և ինձ բազմամեղիս։

6. Անե՛ղ Բնութիւն, մեղա՛յ Քեզ մտօք իմովք, հոգւով և մարմնով իմով. մի՛ յիշեր զմեղս իմ զառաջինս՝ վասն անուանդ Քում սրբոյ։ Եւ ողորմեա՛ Քո արարածոց և ինձ բազմամեղիս։

7. Տեսո՛ղ ամենայնի, մեղա՛յ Քեզ խորհրդով, բանիւ և գործով. ջնջեա՛ զձեռագիր յանցանաց իմոց, և գրեա՛ զանուն իմ ի դպրութեան կենաց։ Եւ ողորմեա՛ Քո արարածոց և ինձ բազմամեղիս։

8. Քննո՛ղ գաղտնեաց, մեղա՛յ Քեզ կամաւ և ակամայ, գիտութեամբ և անգիտութեամբ. թողութիւն շնորհեա՛ մեղաւորիս, զի ի ծննդենէ սուրբ աւազանին մինչև ցայսօր մեղուցեալ եմ առաջի Աստուածութեանդ Քո՝ զգայարանօք իմովք և ամենայն անդամօք մարմնոյս։ Եւ ողորմեա՛ Քո արարածոց և ինձ բազմամեղիս։



столовъ Твоихъ огненными языками. И помилуй Твоихъ твореній и меня многогрѣшнаго!

6. Несотворенное Естество! согрѣшилъ я предъ Тобою мыслію моею, душою и тѣломъ моимъ; не помяни моихъ первыхъ грѣховъ ради имени Твоего святого. И помилуй Твоихъ твореній и меня многогрѣшнаго!

7. Всевидящій! согрѣшилъ я предъ Тобою помысломъ, словомъ и дѣломъ; изгладь рукописаніе моихъ преступленій, и напиши имя мое въ книгѣ жизни, И помилуй Твоихъ твореній и меня многогрѣшнаго!

8. Тайновидѣцъ! согрѣшилъ я предъ Тобою волею и неволею, сознавая и не сознавая; прости меня грѣшнаго, ибо отъ рожденія святой купели и до сего дня грѣшилъ я предъ Твоимъ Божествомъ всѣми чувствами и всѣми членами моего тѣла. И помилуй Твоихъ твореній и меня многогрѣшнаго!

9. Ամենախնամ Տէր, դիր պահապան աչաց իմոց զերկիւղ Քո սուրբ՝ ոչ ևս հայել յաղտ. և ականջաց իմոց՝ ոչ ախորժել լսել զբանս չարութեան. և բերանոյ իմոյ՝ ոչ խօսել զստութիւն. և սրտի իմոյ՝ ոչ խորհել զչարութիւն. և ձեռաց իմոց՝ ոչ գործել զանիրաւութիւն. և ոտից իմոց՝ ոչ գնալ ի ճանապարհս անօրէնութեան. այլ ուղղեա զշարժումն սոցա լինել ըստ պատուիրանաց Քոց յամենայնի։ Եւ ողորմեա Քո արարածոց և ինձ բազմամեղիս։

10։ Հուր կենդանի Քրիստոս, զհուր սիրոյ Քո զոր արկեր յերկիր՝ բորբոքեա յանձն իմ, զի այրեսցէ զախտ հոգւոյ իմոյ, և սրբեսցէ զխիղճ մտաց իմոց, և մաքրեսցէ զմեղս մարմնոյ իմոյ, և վառեսցէ զլոյս գիտութեան Քո ի սրտի իմում։ Եւ ողորմեա Քո արարածոց և ինձ բազմամեղիս։

11. Իմաստութիւն Հօր Յիսուս, տուր



9. Всезаботливый Господь! святой страхъ Твой поставь стражею предъ моими глазами, дабы они не глядѣли нецѣломудренно; предъ моими ушами, дабы они не слушали съ удовольствіемъ злыхъ рѣчей; предъ моими устами, дабы они не говорили лжи; предъ моимъ сердцемъ, дабы оно не помышляло злое; предъ моими руками, дабы они не творили неправды; предъ моими ногами, дабы они не ходили по беззаконному пути; но направь дѣятельность ихъ на путь всѣхъ заповѣдей Твоихъ. И помилуй Твоихъ твореній и меня многогрѣшнаго!

10. Христосъ, огонь живой, огонь Твоей любви, который Ты бросилъ на землю, воспламени въ моей душѣ, да сожжетъ онъ болѣзни моего духа. и освятитъ совѣсть мою, и очиститъ отъ грѣховъ тѣло мое, и зажжетъ въ моемъ сердцѣ свѣтъ познанія Твоего. И помилуй Твоихъ твореній и меня многогрѣшнаго!

11. Іисусъ, премудрость Отца! дай

ինձ զիմաստութիւն զբարիս խորհել, և խօսել, և գործել առաջի Քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից և ի գործոց փրկեա՛ զիս։ Եւ ողորմեա՛ Քո արարածոց և ինձ բազմամեղիս։

12. Կամեցո՛ղ բարեաց, Տէ՛ր կամարար, մի՛ թողուր զիս ի կամս անձին իմոյ գնալ, այլ առաջնորդեա՛ ինձ լինել միշտ ըստ կամաց Քոց բարեխիրաց։ Եւ ողորմեա՛ Քո արարածոց և ինձ բազմամեղիս։

13. Արքա՛յ երկնաւոր, տո՛ւր ինձ զարքայութիւն Քո, զոր խոստացար սիրելեաց Քոց. և զօրացո՛ զսիրտ իմ ատել զմեղս, և սիրել զՔեզ միայն, և առնել զկամս Քո։ Եւ ողորմեա՛ Քո արարածոց և ինձ բազմամեղիս։

14. Խնամո՛ղ արարածոց, պահեա՛ նշանաւ խաչի Քո զհոգի և զմարմին իմ, ի պատրանաց մեղաց, ի փորձութեանց դիւաց, և ի մարդոց անիրաւաց, և յամենայն վտանգից հոգւոյ և



мнѣ мудрость, дабы я и мыслилъ, и говорилъ, и дѣлалъ предъ Тобою доброе во всякое время; спаси меня отъ злыхъ помысловъ, рѣчей и дѣлъ. И помилуй Твоихъ твореній и меня многогрѣшнаго!

12. Благожелатель, угодливый Господь! воздержи меня отъ дѣйствій по склонностямъ души моей и направь меня такъ, чтобы я всегда жилъ по Твоей благой волѣ. И помилуй Твоихъ твореній и меня многогрѣшнаго!

13. Царь небесный! дай мнѣ царство Твое, которое Ты обѣщалъ Твоимъ возлюбленнымъ; и укрѣпи сердце мое, дабы оно возненавидѣло грѣхъ и возлюбило Тебя одного, поступая по Твоей волѣ. И помилуй Твоихъ твореній и меня многогрѣшнаго!

14. Рачитель Твоихъ твореній! знаменіемъ креста Твоего храни мой духъ и тѣло отъ соблазновъ грѣховныхъ, отъ искушеній демоновъ и отъ людей неправедныхъ и отъ

մարմնոյ։ Եւ ողորմեա՛ Քո արարածոց և ինձ բազմամեղիս։

**15.** Պահապան ամենայնի Քրիստոս, աջ Քո հովանի լիցի ի վերայ իմ, ի տուէ և ի գիշերի, ի նստիլ ի տան, ի գնալ ի ճանապարհ, ի ննջել և ի յառնել, զի մի՛ երբէք սասանեցայց։ Եւ ողորմեա՛ Քո արարածոց և ինձ բազմամեղիս։

**16.** Աստուած իմ, որ բանաս զձեռն Քո, և լնուս զամենայն արարածս ողորմութեամբ Քով. Քե՛զ յանձն առնեմ զանձն իմ, Դու հոգա՛ և պատրաստեա՛ զպէտս հոգւոյ և մարմնոյ իմոյ՝ յայսմհետէ մինչև յաւիտեան։ Եւ ողորմեա՛ Քո արարածոց և ինձ բազմամեղիս։

**17.** Դարձուցի՛չ մոլորելոց, դարձո՛ զիս ի չար սովորութեանց իմոց ի բարի սովորութիւն. և բևեռեա՛ ի հոգի իմ զսոսկալի օր մահուն, և զերկիւղ գեհենոյն, և զսէր արքայութեանն. զի զղջացայց ի մեղաց և գործեցից զարդա-



всѣхъ опасностей душевныхъ и тѣлесныхъ. И помилуй Твоихъ твореній и меня многогрѣшнаго!

15. Христосъ, хранитель всѣхъ! да осѣнитъ меня десница Твоя день и ночь, въ домѣ ли сидящаго, или на пути грядущаго, или спящаго, или бодрствующаго, дабы мнѣ никогда не трепетать. И помилуй Твоихъ твореній и меня многогрѣшнаго!

16. Боже мой! Ты открываешь руку и насыщаешь все живущее по благоволенію! Тебѣ вручаю душу мою, Ты заботься и не оставь меня въ нуждахъ моихъ душевныхъ и тѣлесныхъ отъ сего времени и во вѣки. И помилуй Твоихъ твореній и меня многогрѣшнаго!

17. Приводецъ заблудившихся! приведи меня отъ моихъ злыхъ привычекъ къ благонравію, и запечат лей въ душѣ моей ужасный день смерти, страхъ геенны и любовь царствія небеснаго, дабы я раскаялся въ грѣхахъ моихъ и жилъ по прав-

րութիւն: Եւ ողորմեա՛ Քո արարածոց և ինձ բազմամեղիս:

18. Աղբիւր անմահութեան, աղբերացո՛ ի սրտէ իմմէ զարտասուս ապաշխարութեան՝ որպէս պոռնկին, զի լուացից զմեղս անձին իմոյ՝ յառաջ քան զելանելն իմ յաշխարհէս: Եւ ողորմեա՛ Քո արարածոց և ինձ բազմամեղիս:

19. Պարգևիչ ողորմութեան, պարգևեա՛ ինձ ուղղափառ հաւատով և բարի գործով, և սուրբ Մարմնոյ և Արեան Քո հաղորդութեամբ գալ առ Քեզ: Եւ ողորմեա՛ Քո արարածոց և ինձ բազմամեղիս:

20. Բարերա՛ր Տէր, հրեշտակի բարւոյ յանձն արասցես զիս՝ քաղցրութեամբ աւանդել զհոգի իմ, և անխռով անցուցանել ընդ չարութիւն այսոցն, որք են ի ներքոյ երկնից: Եւ ողորմեա՛ Քո արարածոց և ինձ բազմամեղիս:

21. Լոյս ճշմարիտ Քրիստոս, արժա-



дѣ. И помилуй Твоихъ твореній и меня многогрѣшнаго!

18. Источникъ безсмертія! сотвори источники изъ слезъ раскаянія моего сердца, какъ нѣкогда у грѣшницы, дабы я омылъ грѣхи моей души, прежде чѣмъ выйду изъ сего міра. И помилуй Твоихъ твореній и меня многогрѣшнаго!

19. Расточитель милостей! дай мнѣ переселиться къ Тебѣ въ вѣрѣ православной, съ благими дѣлами и съ пріобщеніемъ святого Тѣла и Крови Твоей. И помилуй Твоихъ твореній и меня многогрѣшнаго!

20. Благодѣтель Господь! поручи меня благому ангелу, дабы съ миромъ отдать мою душу, и да поможетъ онъ мнѣ безмятежно перейти черезъ козни воздушныхъ демоновъ. И помилуй Твоихъ твореній и меня многогрѣшнаго!

21. Христосъ, истинный Свѣтъ!

նաւորեա՛ զհոգի իմ ուրախութեամբ տեսանել զլոյս փառաց Քոց ի կոչման աւուրն. և հանգչիլ յուսով բարեաց յօթևանս արդարոց մինչև յօր մեծի գալստեան Քո։ Եւ ողորմեա՛ Քո արարածոց և ինձ բազմամեղիս։

22. Դատաւո՛ր արդար, յորժամ գաս փառօք Հօր դատել զկենդանիս և զմեռեալս, մի՛ մտաներ ի դատաստան ընդ ծառայի Քում, այլ փրկեա՛ զիս ի յաւիտենական հրոյն, և լսելի արա ինձ զերանաւէտ կոչումն արդարոց յերկնից արքայութիւնդ։ Եւ ողորմեա՛ Քո արարածոց և ինձ բազմամեղիս։

23. Ամենողո՛րմ Տէր, ողորմեա՛ ամենայն հաւատացելոց ի Քեզ, իմոց և օտարաց, ծանօթից և անծանօթից, կենդանեաց և մեռելոց. շնորհեա՛ և թշնամեաց իմոց և ատելեաց զթողութիւն՝ որ առ իս յանցանաց, և դարձո՛ զնոսա ի չարեացն, զոր ունին վասն իմ, զի ողորմութեան Քում արժանի



удостой душу мою увидѣть съ радостью свѣтъ Твоей славы въ день призывный, и да успокоится она въ надеждахъ благихъ, на ложахъ праведныхъ до дня великаго Твоего пришествія. И помилуй Твоихъ твореній и меня многогрѣшнаго!

22. Праведный Судія! когда придешь въ славѣ Отца судить живыхъ и мертвыхъ, не призывай къ суду раба Твоего, но избавь меня отъ огня вѣчнаго, и дай мнѣ услышать блаженный призывъ праведныхъ въ царствіе небесное. И помилуй Твоихъ твореній и меня многогрѣшнаго!

23. Всемилостивѣйшій Господь! помилуй всѣхъ вѣрующихъ въ Тебя, сродниковъ моихъ и чуждыхъ, знакомыхъ и незнакомыхъ, живыхъ и мертвыхъ; прости также врагамъ и ненавидящимъ меня ихъ грѣхи противъ меня совершенные и отврати ихъ отъ недоброжелательства, которое они питаютъ ко мнѣ; да будутъ они достойны Твоего мило

եղկելիս: Եւ ողորմեա Քո արարածոց և ինձ բազմամեղիս:

24. Փառաւորեալ Տէր, ընկալ զաղաչանս ծառայիս Քո, և կատարեա ի բարի զխնդրուածս իմ, բարեխօսութեամբ սրբուհւոյ Աստուածածնին, և Յովհաննու Մկրտչին, և սրբոյն Ստեփաննոսի նախավկային, և սրբոյն Գրիգորի մերոյ Լուսաւորչին, և սրբոց առաքելոց, և մարգարէից, և վարդապետաց, և մարտիրոսաց, և սրբոց հայրապետաց, և ճգնաւորաց, և կուսանաց, և ամենայն սրբոց Քոց երկնաւորաց և երկրաւորաց:

Եւ Քեզ փառք և երկրպագութիւն անբաժանելի սուրբ Երրորդութեանդ յաւիտեանս յաւիտենից. Ամէն.



сердія. И помилуй Твоихъ твореній и меня многогрѣшнаго!

24. Прославленный Господь! прими моленія раба Твоего и исполни мои прошенія заступничествомъ святой Богородицы, Крестителя Іоанна, святого Стефана первомученика, святого Григорія, Просвѣтителя нашего, святыхъ апостоловъ, пророковъ, учителей, мучениковъ, святыхъ патріарховъ, пустынножителей, дѣвъ и всѣхъ святыхъ Твоихъ на небѣ и на землѣ.

А Тебѣ, святая нераздѣльная Троица! да будетъ слава и поклоненіе во вѣки вѣковъ. Аминь.

## ԵՐԳ ԱՌԱՋՆՈՅ ԱՒՈՒՐ ՄԻԱՇԱԲԱԹԻՆ
## ԵՒ
## Ի ՅԱՐՈՒԹԵԱՆՆ ՔՐԻՍՏՈՍԻ

*Նորաստեղծեալ Բանն յանէից*
*Ի սկզբանէ զերկինս երկնից,*
*Եւ զերկնային զօրս անմարմնոց*
*Իմանալեացըն զուարթնոց,*
*Եւ ըզգալի տարերց քառից*
*Հակառակաց միաբանից.*
*Որով յաւէտ փառաբանի*
*Երրորդութիւնն անճառելի։*

*Երեքսրբեան մի Տէրութիւն,*
*Միով բնութեամբ Աստուածութիւն.*
*Լոյսն որ անեղ արարչական՝*
*Ասաց լինել լոյս եղական.*
*Զոր և ծագեաց յօրն առաջին*
*Միաշաբաթ կիւրակէին.*
*Որով յաւէտ փառաբանի*
*Երրորդութիւնն անճառելի։*

*Րաբունօրէն բացատրեսցուք*
*Զծածկեալ խորհուրդըն ծանիցուք.*



## ПѢСНЬ НА ПЕРВЫЙ ДЕНЬ ТВОРЕНІЯ И НА ВОСКРЕСЕНІЕ ХРИСТОВО *)

Въ началѣ Слово—Богъ сотворилъ изъ ничего небо и землю, и небесныя воинства безплотныхъ бодрыхъ духовъ, и видимыя четыре стихіи, враждебныя одна другой, но пребывающія въ согласіи: сего ради прославляется неизреченная Троица.

Трисвятое единое Господство, единоестественное Божество, несотворенный творящій Свѣтъ сказалъ— и сталъ сотворенный свѣтъ, который возсіялъ въ воскресенье, первый день недѣли: сего ради прославляется неизреченная Троица.

Вникнемте въ разумѣніе сокровеннаго таинства; ибо мысленный

---

*) Начальныя буквы икосовъ этой пѣсни даютъ имя „Нерсесъ“—разумѣется „Благодатный“ по прозванію: она написана стихами.—Какъ въ первый день недѣли сотворены небо, земля и свѣтъ, такъ утромъ перваго же дня недѣли воскресъ Христосъ и озарилъ міръ свѣтомъ и учредилъ церковь—новую землю и новое небо.

Զի Լոյսն անտես իմանալի
Մաքուր հոգւոց տեսանելի.
Ի սոյն ծագեաց միաշաբաթ
Մեզ յարութեան սուրբ ճառագայթ.
Եկայք, փրկեալք, ընդ զուարթնոյն
Տո՛ւք օրհնութիւն Յարուցելոյն։
Սէրըդ սիրով խոնարհեցար
Ի փրկութիւն մեր մարմնացար.
Նովին մարմնովըն խաչեցար,
Ի գերեզման մահու եդար.
Այսօր յարեար Աստուածաբար,
Ի հրեշտակաց քարոզեցար.
Եկայք, փրկեալք, ընդ զուարթնոյն
Տո՛ւք օրհնութիւն Յարուցելոյն։
Երեւեցար խընկաբերիցն
Յողջոյն կենաց ուրախալից,
Եւ ի լերինըն Գալիլեա
Առաքելոց մետասանից.
Արժանացո՛ զմեզ ընդ նոսին՝
Զքեզ տեսանել յօրըն վերջին.
Եկայք, փրկեալք, ընդ զուարթնոյն
Տո՛ւք օրհնութիւն Յարուցելոյն։



Свѣтъ—Христосъ, невидимый для тѣлеснаго глаза, но видимый для чистыхъ душъ, въ сей первый день, воскреснувъ изъ мертвыхъ, осіялъ насъ свѣтомъ жизни: придите, спасенные, воздайте съ бодрымъ духомъ Воскресшему хваленіе.

Боже—Любовь! движимый любовью, Ты сошелъ съ неба, воплотился ради нашего спасенія, былъ распятъ тѣломъ Тобою принятымъ и положенъ въ гробъ: въ сей день Ты воскресъ, какъ Богъ, Тебя возвѣстили ангелы—придите, спасенные, воздайте съ бодрымъ духомъ Воскресшему хваленіе.

Съ радостнымъ привѣтомъ Ты явился мvроносицамъ, а на горѣ Галилейской—одиннадцати апостоламъ: удостой и насъ съ ними видѣть Тебя въ послѣдній день—придите, спасенные, воздайте съ бодрымъ духомъ Воскресшему хваленіе.

Սիօնի որդիք, զարթիք,
Հարսին Լուսոյ տուք աւետիք՝
Եթէ Փեսայն քո յարուցեալ
Յաղթեաց մահու իշխանութեամբ.
Գայ պսակել ընդ քեզ փառօք,
Ե՛լ ընդ առաջ պերճնեալ զարդուք.
Երգեա՛ երգ նոր Յարուցելոյն,
Ննջեցելոց կենաց պտղոյն։

---

## ԵՐԳ ՅԱՒՈՒՐՍ ՄԵԾԻ ՊԱՀՈՑ

Նայեա՛ց սիրով, Հա՛յրըդ գըթած,
Ի Քո ստեղծեալ գործըս ձեռաց,
Եւ ըզզըրանակըս հրեշտակաց՝
Տո՛ւր պահապան մեզ անկարացս.
Փրկեա՛ զանձինս ի փորձանաց՝
Ի խաւարի շրջող դիւաց.
Զի ի տուընջեան և գիշերի՝
Տացուք Քեզ փառս անլռելի։
Էին անեղ անըսկըզբան
Ծընունդ անճառ Որդի և Բան.



Сыны Сіона! воспряньте, возвѣстите благую вѣсть невѣстѣ Свѣта: твой Женихъ, воскреснувъ, съ властью побѣдилъ смерть—Онъ идетъ вѣнчать тебя славою, выйди Ему на срѣтеніе въ свѣтломъ украшеніи, пой новую пѣснь Воскресшему, плоду жизни усопшихъ.

---

## ПѢСНЬ, ВОСПѢВАЕМАЯ ВО ВРЕМЯ ВЕЛИКАГО ПОСТА.

Отецъ милосердый! взгляни съ любовью на творенія рукъ Твоихъ и дай намъ, немощнымъ, хранителями легіоны ангеловъ; спаси души наши отъ искушеній злыхъ духовъ, рыщущихъ во мракѣ; и мы день и ночь немолчно воздадимъ Тебѣ славу.

Неизреченное рожденіе, Сынъ и Слово несотвореннаго безначальна-

Որ արարեր զտիւ գործոյ՝
Եւ զգիշեր ի հանգիստ քնոյ,
Տո՛ւր ի ննջել աչաց մարմնոյ,
Արթուն լինել մե՛զ ըստ հոգւոյ.
Զի ի տուընջեան և գիշերի՝
Տացուք Քեզ փառս անլռելի։

Բարուն հոգւոց բանաւորաց
Աղբիւր լուսոյ, Բաշխող շնորհաց.
Ի փակել դրանց բնութեանց մարմնոց
Լոյս տո՛ւր աչաց սրտից մերոց.
Ի գիշերայ առ Քեզ կանխել՝
Ընդ հրեղինացն օրհնաբանել.
Զի ի տուընջեան և գիշերի՝
Տացուք Քեզ փառս անլռելի։

Սուրբըդ սրբոց, Երրորդութիւն.
Զմեզ մաքրեա՛ Քեզ բնակութիւն.
Շնորհեա՛ ընդ մանկանցն առագաստի
Հանգչել ընդ Քեզ ի յանկողնի.
Տո՛ւր զհայցուած բարեկամին
Զփոխ երից նկանակին.
Զի ի տուընջեան և գիշերի՝
Տացուք Քեզ փառս անլռելի։



го Сущаго! Ты, который сотворилъ день для дѣла, а ночь для соннаго покоя, дай душѣ нашей бодрствовать, когда сномъ закрываются тѣлесные глаза наши: и мы день и ночь немолчно воздадимъ Тебѣ славу.

Учитель разумныхъ душъ, Источникъ свѣта, Раздаватель благодати! когда замыкаются двери тѣлесъ нашихъ *), Ты сообщи свѣтъ очамъ нашихъ сердецъ, чтобы ночью стремиться къ Тебѣ и славословить съ огненными духами: и мы день и ночь немолчно воздадимъ Тебѣ славу.

Святая святыхъ, Троица! очисти и содѣлай насъ Твоимъ жилищемъ; дни намъ съ отроками чертога почить съ Тобою въ славѣ Твоей; дай намъ твердость въ вѣрѣ, надеждѣ и любви! и мы день и ночь немолчно воздадимъ Тебѣ славу.

---

*) т.-е. всѣ чувства вообще, во время сна.

Երևելի լոյս ստեղծեր
Զտիւ և գիշեր բաժանեցեր.
Ծագեա մեզ, Տէր, ի գիշերի
Ըզճառագայթս իմանալի.
Տուր յամենայն ժամանակի
Զպահպանող աջ Քո հովանի.
Զի ի տուընջեան և գիշերի՝
Տացուք Քեզ փառս անլռելի։

Սիրոյ Քո հուր արկեալ յերկիր
Բորբոքեսցի ի հոգիս մեր.
Զխորհուրդ սրտից մեր մաքրեսցէ
Զլոյս գիտութեան Քո փայլեսցէ.
Ի քնոյ մահու զմեզ զարթուսցէ
Զմիտս բոցով Քո վառեսցէ.
Զի ի տուընջեան և գիշերի՝
Տացուք Քեզ փառս անլռելի։

Ի Քեզ նայիմք, Լոյսդ անմատոյց,
Ի զգայական ծածկեալ լուսոյ.
Որ վասըն մեր եդար ի գբի
Եւ ննջեցեր ի տապանի.
Առ մեզ նընջեա՛, արթուն Բնութիւն,
Հերքեա՛ զչարին ներգործութիւն.



Ты сотворилъ видимый свѣтъ, отдѣлилъ день отъ ночи; осіяй насъ, Господи, въ ночи мысленными лучами; пусть на всякое время хранительная десница Твоя осѣняетъ насъ: и мы день и ночь немолчно воздадимъ Тебѣ славу.

Огонь Твоей любви, брошенный на землю, пусть возгорится въ душахъ нашихъ—очиститъ помыслы нашихъ сердецъ, освѣтитъ свѣтомъ Твоего познанія, возстановитъ насъ отъ смертнаго сна и мысли наши воспламенитъ Твоимъ пламенемъ: и мы день и ночь немолчно воздадимъ Тебѣ славу.

На Тебя взираемъ очами вѣры, о неприступный Свѣтъ, сокрытый отъ чувственнаго свѣта, Ты, который былъ положенъ въ гробѣ и почилъ тамъ, почи въ насъ, о бодрствующее Естество, и отгони отъ насъ дѣйствіе лукаваго: и мы день

Զի ի տուընջեան և գիշերի՝
Տացուք Քեզ փառս անլռելի։
Էիդ լուսոյ անըստուերի
Պաղատանօք կամք առաջի.
Որ փակեալ դրամբք յերեկոյին
Երևեցար մետասանին.
Ընդ Թովմայի առ Քեզ գոչեմք՝
Տէր և Աստուած զՔեզ դաւանեմք.
Էջ և առ մեզ յերեկոյիս
Եւ տուր ողջոյն Քո ի հոգիս։
Բամեալքս ըզՔեզ, Տէր, աղաչեմք՝
Մեզ յօգնութիւն հայեաց, հայցեմք.
Պահապանդ Իսրայէլի՝
Անձանց մերոց լեր հովանի.
Օթեան տուր մեզ, Խաղաղարար,
Զի ննջեսցուք անխռովաբար.
Եւ ընդ առաւօտս կանխեսցուք
Օրհնել ըզՔեզ ընդ Հօր Հոգւով։
Գոչման փողոյն Գաբրիէլի
Որ ի վերջնումըն գիշերի.
Լսել արա զմեզ արժանի
Եւ յաջակողմն օդեաց դասի.



и ночь немолчно воздадимъ Тебѣ славу.

Мы предстоимъ предъ Тобою, Творцомъ чистѣйшаго свѣта; предъ Тобою, который явился одиннадцати ученикамъ, когда двери были заперты; вмѣстѣ съ Ѳомою къ Тебѣ взываемъ—Господомъ и Богомъ исповѣдуемъ Тебя: сойди къ намъ въ сей вечерній часъ и дай нашимъ душамъ Твой привѣтъ *).

Мы, здѣсь собравшіеся, молимъ Тебя, Господи—приди намъ на помощь; Хранитель Израиля! осѣни души наши; Миротворецъ! сотвори у насъ обитель, дабы намъ послѣ мирнаго сна возстать рано утромъ, хвалить Тебя съ Отцомъ и Духомъ.

Въ послѣднюю ночь, когда раздастся Гавріилова труба, удостой насъ услышать ее и стать одесную

*) „пришелъ Іисусъ, сталъ посреди ихъ, и сказалъ: миръ вамъ“ Іоаннъ 20. 26.

Անշէջ վառեալ զլոյս լապտերաց՝
Ըստ իմաստուն հինգ կուսանաց.
Ձի ընդ Փեսային ի յառագաստ՝
Հարսունք հոգւով մտցուք ի փառս:

---

## ՇԱՐԱԿԱՆ ԿԻՐԱԿԱՄՏԻ

Սուրբ ես Տէր զօրութեանց, որ բնակեալդ ես ի յերկինս. և բարեբանիս ի սրբոց Քոց:

Երկնային զօրութիւնք՝ Սերովբէք և Քերովբէք. անդադար օրհնեն սուրբ զանունդ Քո:

Քահանայք ընդ նորին պաշտօնեայք և ժողովուրդք, երկրպագեսցուք տէրութեանդ Քո:

Լոյսդ որ յառաջ քան զյաւիտեանս ի Հօրէ առաքեցար, և լուսով իմանալեաւ լցեր զարարածս. օրհնեալ ես Թագաւոր յաւիտենից:

Որ զլոյսն ի սկզբանէ հաստատեցեր



съ орцами—съ неугасимо пламенѣющими свѣтильниками подобно пяти мудрымъ дѣвамъ, вступить намъ, дѣвамъ душою, въ Твой чертогъ и въ славу съ Тобою, Женихомъ.

---

## ШАРАКАНЪ, ВОСПѢВАЕМЫЙ НАКАНУНѢ ВОСКРЕСНЫХЪ ДНЕЙ.

Святъ Ты, Господь силъ, который обитаешь на небесахъ и благословляешься Твоими святыми.

Небесныя силы, Серафимы и Херувимы непрерывно хвалятъ святое Твое имя.

Мы, священники, служители церкви и народъ поклоняемся Твоему владычеству.

Предвѣчный Свѣтъ! Ты былъ посланъ отъ Отца, и мысленнымъ свѣтомъ наполнилъ твари—благословенъ Ты, Царь вѣковъ.

Ты снова утвердилъ изначальный

վերստին, և զխաւարն անգիտութեան յարութեամբդ Քո հալածեցեր. օրհնեալ ես Թագաւոր յաւիտենից։

Ուստի և մեք լուսաւորեալքս ընդ լուսեղէն զուարթնոցն, երգեսցուք ցնծութեամբ ի յարութեան երեկոյիս. օրհնեալ ես Թագաւոր յաւիտենից։

---

## ՇԱՐԱԿԱՆ ԱՊԱՇԽԱՐՈՒԹԵԱՆ.

1) Հայր բազումողորմ. խոստովանիմ առ Քեզ որպէս զանառակ որդին. թո՛ղ ինձ ըզմեղս իմ և ողորմեա։

— Տէ՛ր, որ գթացար ի կինըն քանանացի. գթա՛ և յիս ի մեղաւորս և ողորմեա։

— Տէ՛ր, որ դարձուցեր ըզմաքսաւորն ի գիտութիւն ճըշմարտութեան դարձո՛ և զիս ըզմոլորեալս և ողորմեա։

2) Աստուած բազումողորմ. խընայեա՛ յարարածըս Քո՛, հայր ամենակալ, և ողորմեա։



свѣтъ, и мракъ невѣдѣнія разсѣялъ Твоимъ воскресеніемъ—благословенъ Ты, Царь вѣковъ.

Посему и мы, просвѣщенные, съ свѣтлыми бодрыми духами ликуя воспоемъ въ сей воскресный вечеръ —благословенъ Ты, Царь вѣковъ.

---

## ШАРАКАНЪ ПОКАЯНІЯ.

1. Отецъ многомилостивый! исповѣдываюсь передъ Тобою, какъ блудный сынъ: отпусти мнѣ грѣхи мои и помилуй.

— Господи! Ты, который сжалился надъ ханаянкою, сжалься и надо мною грѣшнымъ и помилуй.

— Господи! Ты, который обратилъ мытаря къ познанію истины, обрати и меня заблудшаго и помилуй.

2. Боже многомилостивый! пощади Твои творенія, Отецъ вседержитель, и помилуй.

— Արեգակն արդարութեան, ծագեա ի հոգիս մեր զլոյս ճշմարտութեան և ողորմեա։

— Տուր մեզ, Տէր, զխաղաղութիւն և փրկեա ի նեղչաց մերոց, Հոգիդ ճշմարտութեան, և ողորմեա։

3) Ի նեղութեան իմում օգնեա ինձ, Տէր, որպէս երբեմն Յովնանու և ողորմեա։

— Ի յանցանաց իմոց մաքրեա զիս, Տէր, որպէս երբեմն զմաքսաւորն և ողորմեա։

— Ի նենգաւոր շրթանց փրկեա զիս, Տէր, և յարենէ ապրեցո և ողորմեա։

4) Զղջման իմոյ զարտասուս արկանեմ առաջի Քո, Քրիստոս, թող ինձ զմեղս իմ, որպէս երբեմն զպոռնկին, որ միայնդ ես բազմագութ։

— Անկանիմ առաջի Քո, Քրիստոս, որ հովիւդ ես բանաւոր հօտի. խնդ-



— Солнце праведности! осіяй души наши свѣтомъ истины и помилуй.

— Дай намъ, Господи, миръ; избави насъ, Духъ истины, отъ притѣснителей нашихъ и помилуй.

3. Въ скорби моей помоги мнѣ, Господи, какъ нѣкогда Іонѣ, и помилуй.

— Очисти меня отъ грѣховъ моихъ, Господи, какъ нѣкогда мытаря, и помилуй.

— Спаси меня отъ устъ коварныхъ, избавь отъ крови и помилуй.

4 Слезы моего раскаянія повергаю передъ Тобою, Христе, отпусти мнѣ грѣхи мои, какъ нѣкогда (грѣхи) блудницы, о Ты, одинъ многомилостивый.

— Христе! припадаю къ Тебѣ, пастырю разумной паствы, ищи и

րեա և զիս ըզմոլորեալս, որ միայնդ ես բազմագութ·

— Ըզմեղս իմ ցուցից Քեզ, Քրիստոս, որ բըժիշկդ ես հոգւոց և տէր կենաց. բըժըշկեա և զիմ զհիւանդութիւնս, որ միայնդ ես բազմագութ։

5) Եկեսցէ, Տէր, ի վերայ մեր ողորմութիւն Քո և բան փըրկութեան Քո պահեսցէ զանձինս մեր ի մեղաց։

— Ողորմութիւն Քո և ճըշմարտութիւն Քո և լոյս երեսաց Քոց առաջնորդեսցէ մեզ ի յարդարութիւն։

— Որ ողորմածդ ես գըթած, և երկայնամիտ, Տէր, ընկալ զաղաչանս մեր բարեխօսութեամբ սուրբ Աստուածածնին։

6) Տէր, ըզլուր միւսանգամ Քո գալըստեանդ լըւա և երկեա, զի ուսայ ի սըրբոց պատուիրանացն եթէ գաս Դու ի դատել զերկիր։

— Տէր, յիշեցի ըզչար ըզգործս իմ և զարհուրեցայ. զի ծանեայ ճշմար-



меня заблудшаго, о Ты одинъ многомилостивый.

— Христе! грѣхи свои я обнаружу Тебѣ, врачу души и владыкѣ жизни: уврачуй и мой недугъ, о Ты одинъ многомилостивый.

5. Да придетъ на насъ, Господи, милость Твоя и да сохранитъ души наши отъ грѣховъ Твое спасительное слово.

— Милость Твоя и истина Твоя и свѣтъ лица Твоего да направитъ насъ на справедливость.

— Господи! Ты, который милосердъ, сострадателенъ и долготѣрпеливъ, прими моленія наши по заступничеству святой Богородицы!

6) Господи! я услышалъ слухъ втораго Твоего пришествія и ужаснулся; ибо я узналъ изъ святыхъ Твоихъ заповѣдей, что идешь Ты судить землю.

— Господи! я вспомнилъ злыя свои дѣла и ужаснулся! ибо уразу-

տութեամբ զահաւոր և զանաչառ ըզՔո դատաստանդ։

— Տէր, յիշեցի և ըզգութ արարչական սիրոյ Քո առ Քո արարածս. և ի Քո գթութիւնդ ապաւինեալ աղաչեմ. ողորմեա ինձ յաւուր յայնմիկ, Քրիստոս, արդար դատաւոր։

---

## ՀԱՆԳԱՆԱԿ ՆԻԿԻԱԿԱՆ

Հաւատամք ի մի Աստուած ի Հայրն ամենակալ յարարիչն երկնի և երկրի, երևելեաց և աներևութից։

Եւ ի մի Տէր Յիսուս Քրիստոս Որդին Աստուծոյ, ծնեալն յԱստուծոյ Հօրէ՝ Միածին, այսինքն յէութենէ Հօր։ Աստուած յԱստուծոյ, Լոյս ի Լուսոյ, Աստուած ճշմարիտ, յԱստուծոյ ճշմարտէ ծնունդ և ոչ արարած։ Նոյն ինքն ի բնութենէ Հօր, որով ամենայն ինչ եղև յերկինս և ի վերայ երկրի, երևելիք և աներևոյթք։ Որ



мѣлъ по истинѣ страшный и беспристрастный судъ Твой.

— Господи! я вспомнилъ (въ тоже время) и милосердіе творческой Твоей любви къ своимъ твореніямъ и прибѣгая къ Твоему милосердію, молю—помилуй меня въ тотъ день, Христе, судія праведный.

---

## НИКЕЙСКІЙ СИМВОЛЪ ВѢРЫ.

Вѣруемъ во единаго Бога, Отца Вседержителя, Творца неба и земли, видимыхъ и невидимыхъ.

И во единаго Господа Іисуса Христа, Сына Божія, Единороднаго, родившагося отъ Отца—Бога, то есть отъ сущности Бога. Богъ отъ Бога, Свѣтъ отъ Свѣта, Богъ истинный, отъ Бога истиннаго рожденный, не сотворенный. Онъ есть отъ естества Отца, отъ Котораго произошло все на небѣ и на землѣ—видимыя и невидимыя. Который,

յաղագս մեր մարդկան և վասն մերոյ փրկութեան իջեալ ի յերկնից՝ մարմնացաւ, մարդացաւ, ծնաւ կատարելապէս և Մարիամայ սրբոյ կուսէն Հոգւովն Սրբով։ Որով էառ զմարմին, զհոգի զմիտ, և զամենայն որ ինչ է ի մարդ՝ ճշմարտապէս է ոչ կարծեօք։ Չարչարեալ, խաչեալ, թաղեալ, յերրորդ աւուր յարուցեալ, ելեալ ի յերկինս նովին մարմնովն նստաւ ընդ աջմէ Հօր։ Գալոց է նովին մարմնովն և փառօք Հօր ի դատել զկենդանիս և զմեռեալս, որոյ թագաւորութեանն ոչ գոյ վախճան։

Հաւատամք և ի Սուրբ Հոգին՝ յանեղն և ի կատարեալն, որ խօսեցաւ յօրէնս և ի մարգարէս և յաւետարանս։ Որ էջն ի Յորդանան, քարոզեաց զառաքեալսն և բնակեցաւ ի սուրբսն։

Հաւատամք և ի մի միայն, ընդհանրական և յառաքելական եկեղեցի։ ի մի մկրտութիւն, յապաշխարութիւն, ի



ради насъ человѣковъ и ради нашего спасенія, сошедши съ неба, воплотился, вочеловѣчился, родился совершенно отъ св. Дѣвы Маріи Святымъ Духомъ. Отъ Котораго (Св. Духа) принялъ тѣло, духъ, разумъ и все, что въ человѣкѣ, истинно, а не воображаемо. Пострадалъ, былъ распятъ, погребенъ, въ третій день воскресъ, вознесся на небо съ тѣмъ же тѣломъ и сѣлъ одесную Отца. Придетъ съ тѣмъ же тѣломъ и со славою Отца судить живыхъ и мертвыхъ; Его же царству не будетъ конца.

Вѣруемъ и въ Духа Святаго—Несотвореннаго и Совершеннаго—Глаголившаго въ законѣ, пророкахъ и евангеліяхъ; Сошедшаго на Іорданъ, Проповѣдавшаго посланнаго и Обитавшаго въ святыхъ.

Вѣруемъ и во единую, соборную и апостольскую церковь, во единое крещеніе, покаяніе, очищеніе и от-

քաւութիւն և ի թողութիւն մեղաց։ ի յարութիւնն մեռելոց, ի դատաստանն յաւիտենից՝ հոգւոց և մարմնոց, յարքայութիւնն երկնից և ի կեանսն յաւիտենականս։

## ԴԱՒԱՆՈՒԹԻՒՆ ՀԱՒԱՏՈՅ

### ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ

Խոստովանիմք և հաւատամք ամենակատար սրտիւ զՀայրն Աստուած՝ անեղ, անծին, և անսկիզբն. այլ ծնող Որդւոյ և բղխող Հոգւոյն Սրբոյ։

Հաւատամք զԲանն Աստուած, անեղ՝ ծնեալ՝ և սկսեալ ի Հօրէ նախ քան զյաւիտեանս. ոչ յետոյ և ոչ կրտսեր, այլ որքան Հայրն Հայր, ընդ նմին և Որդին Որդի։

Հաւատամք զՍուրբ Հոգին Աստուած՝ անեղ, անժամանակ, ոչ ծնեալ, այլ բղխեալ ի Հօրէ, էակից Հօր և փառակից Որդւոյ։



пущеніе грѣховъ. Въ воскресеніе мертвыхъ, въ послѣдній судъ—душъ и тѣлъ, въ царство небесное и въ жизнь вѣчную.

## СИМВОЛЪ ВѢРЫ

### АРМЯНСКОЙ АПОСТОЛЬСКОЙ ЦЕРКВИ.

Исповѣдуемъ и вѣруемъ всѣмъ сердцемъ въ Бога—Отца, Несотвореннаго, Нерожденнаго и Безначальнаго: также въ Родителя сына и Источника Святого Духа.

Вѣруемъ въ Бога—Слово, Несотвореннаго, Рожденнаго и начало Имущаго отъ Отца прежде вѣкъ; но не послѣ Отца рожденнаго и Неменьшаго, чѣмъ Отецъ, но какъ Отецъ есть Отецъ, такъ и Сынъ есть Сынъ.

Вѣруемъ въ Бога—Святого Духа, Несотвореннаго, Невременнаго, Нерожденнаго, но Исходящаго отъ Отца, Единосущнаго Отцу и Сопричастника славы Сына.

Հաւատամք զԵրրորդութիւնն Սուրբ. մի բնութիւն, մի Աստուածութիւն, ոչ երեք աստուածք, այլ մի Աստուած, մի կամք, մի թագաւորութիւն, մի իշխանութիւն, Արարիչ երևելեաց և աներևութից:

Հաւատամք յԵկեղեցի սուրբ՝ զթողութիւն մեղաց, հաղորդութեամբ սրբոց:

Հաւատամք զմինն յերից անձանց զԲանըն Աստուած՝ ծնեալ ի Հօրէ նախ քան զյաւիտեանս. ի ժամանակի իջեալ յԱստուածածին Կոյսն Մարիամ. առեալ յարենէ նորա՝ միաւորեաց ընդ Իւրում Աստուածութեանն. իննամսեայ ժուժկալեալ յարգանդի անարատ Կուսին. և եղև Աստուածն կատարեալ, մարդ կատարեալ, հոգւով և մտօք և մարմնով. մի անձն, մի դէմ, և միաւորեալ մի բնութիւն: Աստուածն մարդացեալ առանց փոփոխման և առանց այլայլութեան. անսերմն յղութիւն և անապական ծնունդ. որպէս ոչ է սկիզբն Աս



Вѣруемъ въ Троицу Святую, во едино естество, едино Божество. Не три суть боги, но единъ Богъ, едина воля, едино царство, едино владычество, Творецъ видимыхъ и невидимыхъ.

Вѣруемъ въ святую Церковь, въ отпущеніе грѣховъ, въ соучастіе святыхъ,

Вѣруемъ въ единаго отъ трехъ лицъ, Бога—Слово. Рожденнаго отъ Отца прежде вѣкъ; во время оно Сошедшаго въ Богородицу Дѣву Марію, Пріявшаго отъ крови Ея и Соединившаго съ Божествомъ Своимъ. Девять мѣсяцевъ Пробывшаго во чревѣ Пречистой Дѣвы и бывшій совершенный Богъ, совершенный человѣкъ—духомъ, разумомъ и тѣломъ; едино лицо, единъ видъ и соединенное единое естество. Богъ вочеловѣчился безъ измѣненія, безъ премѣненія; безсѣмянное зачатіе и нетлѣнное рожденіе. Какъ нѣтъ начала Божеству Его, такъ нѣтъ и

աստուածութեան Նորա և ոչ վախճան մարդկութեան Նորա, զի «Յիսուս Քրիստոս երէկ և այսօր, Նոյն և յաւիտեան»։

Հաւատամք զՏէրն մեր Յիսուս Քրիստոս շրջեալ ի վերայ երկրի, յետ երեսուն ամաց եկեալ ի մկրտութիւն. Հայր ի վերուստ վկայեալ՝ «Դա է Որդի Իմ սիրելի». և Հոգին Սուրբ աղաւնակերպ իջեալ ի վերայ Նորա։ Փորձեալ ի սատանայէ և յաղթեալ նմա։ Քարոզեալ մարդկան զփրկութիւն։ Աշխատեալ մարմնով, վաստակեալ, քաղցեալ, և ծարաւեալ. յետոյ եկեալ կամաւ ի չարչարանս, խաչեալ և մեռեալ մարմնով և կենդանի Աստուածութեամբն։ Մարմինն եդեալ ի գերեզմանի՝ միաւորեալ Աստուածութեամբն, և Հոգւովն իջեալ ի դժոխս՝ անբաժանելի Աստուածութեամբն։ Քարոզեալ հոգւոցն՝ աւերեալ զդժոխս և ազատեալ զհոգիսն։ Յետ երից աւուրց յարուցեալ ՚ի մեռելոց և երևեալ աշակերտացն։



Вѣруемъ въ Господа нашего Іисуса Христа, съ тѣмъ же тѣломъ Вознесшагося на небеса и Сидящаго одесную Отца. И паки Грядущаго съ тѣмъ же тѣломъ и со славою судить живыхъ и мертвыхъ. Который и есть воскресеніе всѣхъ человѣковъ.

Вѣруемъ и въ воздаяніе по дѣламъ: праведнымъ будетъ жизнь вѣчная, грѣшникамъ же—мука вѣчная.

## ОТРЕЧЕНІЕ.

Отрекаемся отъ сатаны и всякаго обмана его, отъ обольщеній его, отъ помысловъ его, отъ путей его, отъ злой воли его, отъ злыхъ духовъ его, отъ злыхъ служителей его, отъ злыхъ угождателей его, и отъ всякой злой силы его отрекаемся и отступаемъ.

*Повторяется трижды.*

## ԶՂՋՈՒՄՆ

Մեղա՛յ ամենասուրբ Երրորդութեանն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ։ Մեղուցեալ եմ Աստուծոյ։ Խոստովանիմ առաջի Աստուծոյ՝ և Սրբուհւոյ Աստուածածնին՝ և առաջի քո հա՛յր սուրբ՝ զամենայն մեղս զոր գործեալ եմ։ Քանզի մեղա՛յ խորհրդով, բանիւ և գործով. կամայ և ակամայ, գիտութեամբ և անգիտութեամբ։ Մեղա՛յ Աստուծոյ։

Մեղա՛յ հոգւովս և զօրութեամբ սորա, մտօքս և շարժմամբ սորա, մարմնովս և զգայութեամբ սորա։ Մեղայ զօրութեամբ հոգւոյս. խորամանկութեամբ, անզգամութեամբ, յանդգնութեամբ և երկչոտութեամբ. շռայլութեամբ և ժլատութեամբ, գեղխութեամբ և անիրաւութեամբ, չարահաւանութեամբ, յուսահատութեամբ և թերամտութեամբ։ Մեղա՛յ Աստուծոյ։

Մեղայ չարաբանութեամբ լեզուիս.



## ПОКАЯНІЕ.

Согрѣшилъ я предъ пресвятою Троицею, Отцомъ, Сыномъ и Духомъ Святымъ. Согрѣшилъ я предъ Богомъ: исповѣдую предъ Богомъ и пречистою Богородицею и предъ тобою, отче святой, всѣ грѣхи, мною совершенные. Ибо согрѣшилъ я помысломъ, словомъ и дѣломъ, волею и неволею, сознавая и не сознавая. Каюсь Богу.

Согрѣшилъ я душою и силою ея, разсудкомъ и дѣйствіемъ его, тѣломъ и чувствами его. Согрѣшилъ я силою души моей: коварствомъ, наглостью, дерзостью и робостью, расточительностью и скупостью, распутствомъ и обидою, злонравіемъ, отчаяніемъ и легкомысліемъ. Каюсь Богу.

Согрѣшилъ я злословіемъ языка:

ստախօսութեամբ, սուտ երդմամբ, երդմնազանցութեամբ, հակառակութեամբ, վիճաբանութեամբ, բանսարկութեամբ, քսու. դատարկաբանութեամբ, և ծաղու. զրախօսութեամբ. հերձախօսութեամբ, և անիծաբանութեամբ. տրտնջելով, դժգոհելով, բամբասելով, և հայհոյելով: Մեղայ Աստուծոյ:

Մեղայ գողութեամբ ձեռացս՝ ագահելով, զրկելով, հարկանելով, և սպանանելով: Մեղայ Աստուծոյ:

Այլ և մեղայ եօթնիցս յանցանօք՝ մահացու մեղօք. հպարտութեամբ՝ և մասամբք նորին. նախանձու՝ և մասամբք նորին. բարկութեամբ՝ և մասամբք նորին. ծուլութեամբ՝ և մասամբք նորին. ագահութեամբ, և մասամբք նորին. որկրամոլութեամբ՝ և մասամբք նորին. բղջախոհութեամբ՝ և մասամբք նորին: Մեղայ Աստուծոյ:



лганьемъ, ложной клятвой, клятвопреступленіемъ, сопротивленіемъ, словопреніемъ, ябедничествомъ, клеветничествомъ, пустословіемъ и насмѣшкою; злорѣчіемъ, еретичествомъ и проклятіемъ; роптая, сѣтуя, сплетничая и хуля. Каюсь Богу.

Согрѣшилъ я воровствомъ рукъ: жадничая, лишая, побивая и убивая. Каюсь Богу.

Еще согрѣшилъ я семью смертными грѣхами: гордостью и частями ея, завистью и частями ея, гнѣвомъ и частями его, лѣностью и частями ея, алчностью и частями ея, чреволюбіемъ и частями его, сладострастіемъ и частями его. Каюсь Богу.

Այլ և մեղայ ամենայն պատուիրանացն Աստուծոյ՝ յանձնառելեացն և հրաժարելեացն, զի ոչ զյանձնառականսն կատարեցի, և ոչ ի հրաժարելեացն հեռացայ։ Զօրէնս առի՝ և յօրինացն հեղգացայ. ի կարգս քրիստոնէութեան հրաւիրեցայ՝ և գործովս անարժան գտայ. գիտելով զչարն կամաւ կորացայ, և ի բարեաց գործոց ես ինձէն հեռացայ։ Վա՜յ ինձ, վա՜յ ինձ, վա՜յ ինձ։ Զո՞րն ասեմ, կամ զո՞րն խոստովանիմ. զի անթիւ են յանցանք իմ, անասելի են անօրէնութիւնք իմ, աններելի են ցաւք իմ, և անբժշկելի են վէրք իմ։ Մեղա՜յ Աստուծոյ։

Հա՛յր սուրբ, զքեզ ունիմ միջնորդ հաշտութեան և բարեխօս առ Միածին Որդին Աստուծոյ. զի իշխանութեամբդ որ տուեալ է քեզ, արձակեսցես զիս ի կապից մեղաց իմոց աղաչեմ զքեզ։



Сверхъ того согрѣшилъ я противъ всѣхъ Божіихъ заповѣдей, тѣхъ, которыя повелѣваютъ исполнять обязанности и тѣхъ, которыя воспрещаютъ что либо. Ибо я не исполнилъ тѣхъ, которыя добровольно приняты мною къ исполненію и не отрекся отъ всего того, отъ чего долженъ былъ я отрѣчься; принялъ я законы и уклонился отъ нихъ; вступилъ въ число христіанъ и дѣлами своими оказался недостойнымъ этого имени; зная зло, я добровольно предавался ему и отъ добрыхъ дѣлъ удалялся по собственному побужденію. Горе мнѣ, горе мнѣ, горе мнѣ! всего мнѣ не перечислить, всего мнѣ не исповѣдать: грѣхи мои безчисленны, злодѣянія мои неизрѣчимы, не простительн. мои прегрѣшенія, неизлѣчим. раны мои. Каюсь Богу.

Отче святой! ты мой посредникъ примиренія и ходатай предъ единороднымъ Сыномъ Божіимъ, Освободи меня, данною тебѣ властью, отъ грѣховъ моихъ, умоляю тебя.

## ԱՐՁԱԿՈՒՄՆ

Ողորմեսցի քեզ մարդասէրն Աստուած, և թողութիւն շնորհեսցէ ամենայն յանցանաց քոց, խոստովանացելոց և մոռացելոց։ Եւ ես կարգաւս քահանայական իշխանութեան և հրամանաւն Աստուածային, թէ «զոր արձակիցէք յերկրի՝ եղիցի արձակեալ յերկինս», նովին բանիւն արձակեմ զքեզյամենայն մասնակցութենէ մեղաց քոց. ի խորհրդոց՝ ի բանից՝ և ի գործոց, յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ։ Եւ դարձեալ տամ զքեզ ի Խորհուրդս սուրբ Եկեղեցւոյ, զի զոր ինչ գործիցես բարիս, եղիցի քեզ ի բարեգործութիւն և ի փառս հանդերձեալ կենացն։ Ամէն։



## ОТПУЩЕНІЕ.

Да помилуетъ тебя человѣколюбивый Богъ и даруетъ прощеніе всѣхъ грѣховъ твоихъ, исповѣданныхъ и забытыхъ. И я властью священническаго сана и по Божьему повелѣнію, „что разрѣшите на землѣ, то будетъ разрѣшено на небѣ“, тѣмъ же словомъ отпускаю тебя отъ всякаго участія въ грѣхахъ твоихъ, совершенныхъ помысломъ, словомъ и дѣломъ, во имя Отца и Сына и Святого Духа. Притомъ предаю тебя Таинствамъ святой Церкви, дабы всѣ добрыя дѣла твои сочтены были за добродѣтели и служили бы тебѣ во славу въ будущей жизни. Аминь.

## ԿԱԶՄՈՂԻՑ

*Գրքոյկիս ռուսերէն բաժինը կազմելու համար օգտուել եմ.— ա) «Библія"-ից (Սինոդի հրատար. 1892 թ.), բ. Մ. Էմինի „Шараканъ"-ից և մի քանի ուրիշ գրքերից։*

## ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

## ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ



конца человѣчеству Его, ибо „Іисусъ Христосъ вчера и сегодня и во вѣки Тотъ же“.

Вѣруемъ въ Господа нашего Іисуса Христа, Ходившаго на землѣ, послѣ тридцати лѣтъ Пришедшаго ко крещенію. Отецъ съ неба Свидѣтельствовавшій: „Сей есть Сынъ Мой возлюбленный“. И Духъ Святой, въ видѣ голубя Сошедшій на Него. Искушаемаго сатаною и Поправшаго его, Возвѣстившаго людямъ спасеніе, Трудящагося тѣломъ, Утомлявшагося, Алкавшаго и Жаждавшаго; затѣмъ добровольно Пришедшаго на страданіе, Распятаго и Умершаго тѣломъ, Живого же Божествомъ Своимъ. Тѣло Его положено было въ гробъ совокупно съ Божествомъ, и Духомъ Своимъ Снисшедшаго въ адъ нераздѣльно съ Божествомъ; Проповѣдывавшаго душамъ, Разрушившаго адъ и Освободившаго души сіи; Воскресшаго въ третій день изъ мертвыхъ и Явившагося ученикамъ своимъ.

Հաւատամք զՏէրն մեր Յիսուս Քրիստոս, նովին մարմնով համբարձեալ յերկինս և նստեալ ընդ աջմէ Հօր։ Այլ և գալոց է նովին մարմնով և փառօք Հօր ի դատել զկենդանիս և զմեռեալս։ Որ և յարութիւն ամենայն մարդկան։

Հաւատամք և զհատուցումն գործոց. արդարոցն կեանք յաւիտենական, և մեղաւորացն տանջանք յաւիտենական։

## ՀՐԱԺԱՐՈՒՄՆ

Հրաժարիմք ի սատանայէ և յամենայն խաբէութենէ նորա, ի պատրանաց նորա. ի խորհրդոց նորա, ի գնացից նորա, ի չար կամաց նորա, ի չար հրեշտակաց նորա, ի չար պաշտօնէից նորա, ի չար կամարարաց նորա, և յամենայն չար զօրութենէ նորա՝ հրաժարելով հրաժարիմք։

(Կրկնել երիցս).

ՊԵՏ. ԿԱՆ. ԳՐԱԴԱՐԱՆ
Гос библиотека
ՀՍՍՀ ... ССР
им. А. Мясникяна

## ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

ՑԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Н А рм.
2-895а

ԳԻՆՆ Է 25 Կ.

Դիմել՝ Кіевъ,

*Армянскому Священнику*

*Хорену Мнацаканіанцъ.*

2475
ՍԿԲ 1
8Ռ1 3
ՀՀ Ազգային գրադարան
NL0029316

2-895з

2404